ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«07» «սեպտեմբերի» 2022 թ. № 304-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 6-րդ, 18-րդ կետի 20-րդ ենթակետերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի և դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ջրի որակի և պաշարների կառավարումն ապահովող միջոցառումների կատարման անհրաժեշտությունից"

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել շրջակա միջավայրի նախարարության և Եվրոպական միության կողմից «ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակներում իրականացվող Հայատանի Հանրապետության ջրային ոլորտում ազգային քաղաքականության երկխոսության խորհրդատվական միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահին՝

1) համակարգել Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի և նախաձեռնությունների միջև համագործակցությունը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը Եվրոպական միության Ջրի շրջանակային դիրեկտիվի և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրությամբ ամրագրված ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքներին,
2) համակարգել ջրային ոլորտի միջազգային կոնվենցիաների և համաձայնագրերի՝ ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության ու օգտագործման մասին» կոնվենցիայի «Ջուր և առողջություն» արձանագրության վերաբերյալ իրազեկումը,
3) հանձնաժողովի աշխատանքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել շրջակա միջավայրի նախարարին:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

9/7/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«07» սեպտեմբերի 2022թ.

ք. Երևան

Հավելված

Շրջակա միջավայրի նախարարի

2022 թվականի սեպտեմբերի «07»-ի

N 304- Լ հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Գաբրիելյան	շրջակա միջավայրի նախարարի տեղակալ,
Լ. Աբրհամյան	շրջակա միջավայրի նախարարության ջրային քաղաքականության վարչության պետ, համակարգող,
Ն. Բուդոյան	շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ,
Ա. Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետ,
Ռ. Գրիգորյան	շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ,
Ա. Շահնուբարյան	շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության պետի տեղակալ,
Օ. Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության ջրավազանային պլանավորման կառավարման բաժնի պետ,
Գ. Հովսեփյան	շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության ջրային ռեսուրսների կադաստրի վարման և

	մոնիթորինգի բաժնի պետ,
Լ. Միքայելյան	շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության Հյուսիսային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ,
Լ. Ալիխանյան	շրջակա միջավայրի նախարարության ջրային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Ա. Սայադյան	շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Ք. Հակոբյան	շրջակա միջավայրի նախարարության մթնոլորտային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Մ. Հարությունյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Լ. Ազիզյան	շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար,
Գ. Շահնազարյան	շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ,
Վ. Քեշիշյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի պետ (համաձայնությամբ),
Մ. Նալբանդյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահի տեղակալ (համաձայնությամբ),
Ա. Ղազարյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի գլխավոր քարտուղար (համաձայնությամբ),

Ա. Սերգոյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի խմելու ջրամատակարարման և ջրահեռացման վարչության պետ (համաձայնությամբ),
Ս. Հայրապետյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության պետ (համաձայնությամբ),
Հ. Եսայան	ֆինանսների նախարարություն բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության տնտեսության իրական հատվածի ընթացիկ ծրագրերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ (համաձայնությամբ),
Ն. Բակունց	առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ (համաձայնությամբ),
Ռ. Գրիգորյան	առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ (համաձայնությամբ),
Կ. Հակոբյան	էկոնոմիկայի նախարարության ներդրումային ծրագրերի վարչության փորձագետ (համաձայնությամբ),
Ա. Դեմիրչյան	Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ (համաձայնությամբ),
Ա. Ամիրխանյան	Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ (համաձայնությամբ),
Ն. Բաղդասարյան	Հայաստանի Հանրապետության վիճակագրական պետական խորհրդի անդամ (համաձայնությամբ),
Ն. Մանդալյան	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ

(համաձայնությամբ),

Մ. Մոմջյան	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ (համաձայնությամբ),
Գ. Ղազարյան	«Հայջրնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),
Գ. Գազանճեան	Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի պրոֆեսոր, լճաբան, (համաձայնությամբ),
Ս. Խաչատրյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ջրային համակարգերի, հիդրոտեխնիկայի և հիդրոէներգետիկայի ամբիոնի դասախոս (համաձայնությամբ),
Մ. Գրիգորյան	Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, (համաձայնությամբ),
Գ. Եղիազարյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարան գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, (համաձայնությամբ),
Է. Անախասյան	Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի հասարակական կազմակերպության անդամ (համաձայնությամբ):